№ 227 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 227

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հայկական Կենտրոնական Կոմիտէն եւ Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. Խորհուրդը յանձն առնելով Թիֆլիսում և գաւառներում մեծ քանակութեամբ գաղթականների համար վերմակներ, դօշակներ և տաք շորեր պատրաստելը, սրանով հրաւիրում է կար անող կանանց դիմել Թիֆլիսում նոր բացված աշխատանոցները (Гановская ул. № 3. д. Манташева и Ольгинская ул. № 3, д. Меликъ-Азарянца) կար ստանալու համար։

Խնդրում ենք այն անձանց, որոնք ունեն կարի մեքենաներ բարի լինեն ժամանակաւորապէս յանձնել յիշեալ աշխատանոցներին ձրիապէս կամ վարձով։

Իսկ գաւառներում առաջարկվում է Ընկերութեան ճիւղերին անյապաղ կազմակերպել կարի աշխատանոցներ և, դիմելով Ընկերութեան խորհրդին, ստանալ նիւթեր կամ դրամ տեղումը գնելու։

տպ. 730. 5—4

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐ ԿՈՒՐՍԵՐԻ

ՎԵՐԱՏԵՍՈՒՉԸ

յայտարարում է, որ պարապմունքները կուրսերում, որ գտնվում է ներկայումս ՌՈՍՏՕ-ՎԻՄ ԴՕՆԻ ՎՐԱ, ենթադրվում է սկսել ընթացիկ սեմէստրի վերջերին, սակայն այն հաշւով, որպէս զի ուսումնական տարին կորսված չը համարվի։ Պարապմունքները երբ սկսվելու մասին կը յայտարարվի լրագիրներում։ Ընդունելութեան պայմաններն ըստ պահանջման ուղարկում է Կուրսերի Դիրեկտորը՝ Ռոստով Դ./վ.։ Բժշկական ֆակուլտէտ բանալու մասին կը լինի յատուկ յայտարարութիւն։

տպ. (կ. ե. հ.) 729. 3—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(Զուբալովի անուան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ
Խմբակցութիւնը
Այսօր, հինգշաբթի,
Հոկտեմբերի 15-ին
Կը ներկայացնէ

ԱՒԱՋԱԿՆԵՐ

Ողբերգութիւն 5 գործ. 7 պատկ. Շիլլերի։ Մասնակցում են.—օր. Կարախանեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Բեժանեան, Գաւրօշ, Եանիկեան, Երամեան, Մարութեան, Միքայէլեան, Պետրոսեան, Օհանեան և ուրիշ։

ՖՐԱՆՑԻ դերը կը կատարէ
Պ. ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԸ
Սկիզբն է երեկ. ժ. 8-ին։
Տեղերի գները 4—50 կոպէկ։
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Վ. ՄԱՄՈՒԼԵԱՆ և Կ. ՇԻՐԻՆԵԱՆ
տպ. 733. 1—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
տպ. (ա. օ.) 504. 100—62

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՕՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից կատարելագործված մեթոդով։ Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրեուլկից։
(ա. օ.) տպ. 515. 100—50

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաշեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բոլշնեվսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) տպ. 634. 100—14

ՑՈՅՑ ՏՈՒԷՔ ՋԵՂԾԱՐԱՐՆԵՐԻՆ

Տեղական մի հայ թերթի մէջ Միք. Վարանդեան խօսելով այն մասին, որ փախստականներին օգնելու գործի մէջ աշխատողների մասին զեղծումների լուրեր են պտտում, յարուցանում է կոնտրօլի խնդիր և առ հասարակ հաշուետւութեան խնդիր։

Մի այլ թերթ, «Հովիտը», խօսելով նոյնպէս տարածված լուրերի մասին, փոխանակ պարզ և համարձակ ասելու, թէ փախստականներին օգնող կազմակերպութիւններից ով կասկածվում կամ մեղադրվում է զեղծումների մէջ, արամազդային բարձրութիւնից յորդորներ է կարդում բոլոր հաստատութիւններին հաշիւ և համար տալ հասարակութեանը և նուիրատուների վստահութիւնը ի չարը գործ չը դնել ու չը կորցնել։ Իր այդպիսի ընդհանուր խօսքերով թերթը կասկած է ձգում բոլոր գործող մարմինների վրա, և թողնում է անյայտ, թէ ով է իսկապէս կասկածվում զեղծարարութեան մէջ։

Դա Պիղատոսեան դատաստան է.

Փախստականներին օգնող մարմիններ մի քանի հատ կան—Թիֆլիսում՝ Հայկ. Կենտր. Կոմիտէտ, Նպաստամատոյց Ընկերութիւն, Քաղաքային Յանձնաժողով, Հայրենակցական Միութիւն, Որբերների Կոմիտէտ, Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտ, Հայ Գիւղատնտ. Ընկերութիւն, ապա Մոսկվայի Հայկական Կոմիտէտը, Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Յանձնաժողովը և իր ճիւղերը, Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը, Բագուի Հայկական Կոմիտէտը և այլք։

Արդ, եթէ «Հովիտի» տրամաբանութեամբ գնանք, պէտք է այդ ամենքին կասկածենք զեղծարարութեան մէջ, մինչ, անշուշտ, այդպէս չէ։ «Հովիտը» եթէ ունի որևէ փաստ, պէտք է քաջութիւն ունենայ ասելու, թէ ո՞վ է կասկածվում զեղծարարութեան մէջ, այլ ոչ թէ ընդհանուր կերպով անվստահութիւն և կասկած սերմանէ բոլոր մարմինների վերաբերմամբ։ Դա և անարդարութիւն է, և անազնւութիւն։ Եթէ մի մարմին կամ այդ մարմնի ներկայացուցիչները զեղծումներ են գործել և գործում, ինչո՞ւ միւս մարմինները, որոնք վարում են գործերը շիտակօրէն և հաւատարմօրէն, պէտք է նոյնպէս կասկածվեն։

Եւ այդ նպատակով է, որ մենք քանիցս հարց ենք յարուցել, թէ որքան անտեղի և անյարմար է այն մարմինների, օրինակ՝ Թիֆլիսի Հայկակ. Կենտ. Կոմիտէտի դրութիւնը, երբ նա չը լինելով օրինաւորապէս հաստատված մի մարմին, չունենալով կանոնադրութիւն, վերստուգիչ յանձնաժողով, հանդիսանում է մի անպատասխանատու մարմին, և որովհետև նա չունի անդամներ և Կոմիտէտի անդամներն էլ շարունակ փոխվում են, ըստ անձնական հաճոյքի նախագահների, ուստի յայտնի չէ, թէ ովքեր են լինելու պատասխանատուները, եթէ վաղը պարզվի, որ զեղծումների մասին տարածված լուրերը վերաբերում են այդ մարմնին։ Եւ ինչ հարկ կար ստեղծել այդպիսի մի մարմին, քանի որ կար այնպիսի մի պատկառելի և ձեռնհաս մարմին, ինչպէս Կ. Հ. Բար. Ընկերութիւնն է։

Յամենայն դէպս «Հովիտը» պարտաւոր է յականէ անուանէ յիշել այն հաստատութեան կամ հաստատութիւնների անունը, որոնց մասին խօսք կայ։

Գալով առ հասարակ հաշուետւութեան և կոնտրօլի հարցին, որ յարուցանում է Մ. Վարանդեան, անշուշտ, դրա դէմ ոչ մի առարկութիւն չէ կարող լինել. միայն՝ քարոզողը ամենից առաջ իրանից պէտք է սկսէ և խրատ տայ ամենից առաջ իւրայիններին՝ տալ հայ ազգին հաշիւ և համար այն միլիոնաւոր գումարների, որոնք հաւաքվեցին Հայաստանի ազատութեան անունով մի որոշ կուսակցութեան ձեռքով, որին պատկանում է և ինքը կոնտրօլ և հաշիւ պահանջողը։

Եթէ կար ժամանակ, երբ այդ հաշիւ տալը անյարմար էր նկատվում, որովհետև այդ կուսակցութեան գործունէութիւնը կոնսպիրատիվ էր. այժմ այդպիսի արգելք չը կայ. փառք Աստուծոյ, կուսակցութիւնը դեռ 2 տարի առաջ վայելում էր Թիւրքաց կառավարութեան կատարեալ բարեհաճութիւնը և աջակցութիւնը, ուրեմն և ոչ մի արգելք չը կար Թիւրքիայում հրատարակելու այդ հաշիւը, իսկ այժմ և ոչ մի արգելք չը կայ նոյն պատճառով Ռուսաստանում հրատարակելը։ Գոնէ հայ ժողովուրդը կիմանայ, թէ ուր գնացին իր միլիոնները, որոնք չը կարողացան ազատել Հայաստանը։

Հ. Սաաքեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Հոկտ. 11-ին կէսօրի մօտ Թիւրքական մի զօրամաս, օգտվելով մառախուղից, անցաւ Արխավէ գետը և 4 անգամ յարձակում գործեց մեր զօրաճակատի մի մասի վրա՝ Խօփից դէպի հարաւ-արևելք, բայց վանվեց։ Մեր կորուստներն աննշան են։

Թօրթումի լճից դէպի հարաւ-արևելք, Խարտի լեռնանցքի մօտ և Կէղիկ գիւղից ոչ հեռու ընդհարումներ են առաջապահ զօրախմբերի միջև։

Մնացած ռազմաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Ռուսաց ռազմանաւերը ջրասուզեցին Թիւրքական մի շոգենաւ, որ մեծ քանակութեամբ ռազմամթերք էր տանում. նաւաստիները գերվել են։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Արևելեան զօրքի հաղորդագրութիւնը.

Հոկտ. 9-ին բուլղարները ամբողջ զօրաճակատի վրա յարձակում գործեցին Ստրումիցան գրաւող ֆրանսիական զօրքերի վրա, բայց բոլորովին ջարդվեցին։

Այն տեղեկութիւնը, թէ իբր ֆրանսիացիք ետ են մղվել դէպի Վարդարի աջ ափը, սխալ է։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Դվինայի ձախ ափին՝ Իկսկիւլից դէպի հարաւ գերմանացիք փորձեցին անակնկալ յարձակումով գրաւել մեր ամրութիւններից մինը, բայց իր ժամանակին նկատվեցին և վանվեցին։

Դվինայի մօտ՝ Լինգէնա շրջանում, Ֆրիդրիխշտադտից ներքև թնդանօթաձգութիւն և հրացանաձգութիւն է։

Դվինայի ձախ ափին, Եակոբշտադտից դէպի արևմուտք տաք թնդանօթաձգութիւն է։

Իլլուկստից դէպի արևելք գերմանական նոր յարձակումը աջողութիւն չունեցաւ. Վոյնիւնի գիւղի մօտ մենք կռւով գրաւեցինք այդ գիւղը։

Ստիրի ձախ ափին, Ռաֆալովկից դէպի հիւսիս-արևմուտք մեր զօրքերը ներս խուժեցին Բուլկա Գալուզիյսկա գիւղը, ձեռք ձգելով գնդակացիրներ ու գերիներ։ Զարտօրիյսկից դէպի հիւսիս-արևմուտք, Մեդվէժիէ գիւղի մօտ թշնամու առաջխաղացումը մենք կանգնեցրինք։ Թշնամին ժողովելով խոշոր ույժեր, յարձակում գործեց Կուկլի գիւղից դէպի հիւսիս, Կոլկից դէպի հիւսիս։ Յամառ կռւից յետոյ մեր զօրքերին աջողվեց ետ վանել հակառակորդին, գերելով 7 օֆիցէր և աւելի քան 200 զինուոր։

Օլէկսինէցից դէպի հիւսիս, Վօլիցա գիւղի մօտ թշնամին յարձակում գործեց երեք անգամ, բայց ամեն անգամ էլ ետ մղվեց. Թշնամու դիակները ծածկել են կռւի դաշտը։

ՊԱՐԻԶ.—Շամպանիում մենք հոկտ. 11-ին ունեցանք խոշոր աջողութիւն։ Այստեղ թշնամին դեռ դիմադրում էր իր երկրորդ զօրագծի առաջ մի ամուր դիրքի մէջ, որտեղից նա կարողանում էր դիմադրել մեր յարձակումներին։ Այդ դիրքը պաշտպանված էր Լակուրտին կոչված չափազանց ամուր պատնէշներով։ Այժմ այդ պատնէշները մենք ձեռք ձգեցինք յամառ կռւով։ Երկարութեամբ նրանք գրաւում էին 1200 մետր, խորութեամբ 250 մետր և բաղկացած էին երեք կամ չորս կարգ խրամատներից, որոնք իրար հետ կապված էին ստորերկրեայ տօննէլներով ու անցքերով։ Չը նայած այդ դիրքի բոլոր պաշտպանողական ույժին և հակառակորդի ծայրայեղ յամառութեան մեր զօրքերին, ուժեղ թնդանօթաձգութիւնից ու կատաղի կռիւներից յետոյ, աջողվեց գրաւել այն ամբողջովին օրվայ վերջում։ Թշնամին, որի կորուստները շատ խոշոր են, թողեց մեր ձեռքում 200 գերի։

Թշնամին երէկ կատաղի հակայարձակում գործեց Շամպանիում, Լակուրտին ամրութեան զօրաճակատի վրա, բայց մենք մնացինք մեր գրաւած դիրքերի արևելեան ու արևմտեան մասում։ Գերմանացիներին աջողվեց գրաւել միայն կենտրոնում մի քանի խրամատ, որոնց մէջ շարունակվում է կատաղի կռիւ ձեռքի ռումբերով։

ՊԱՐԻԶ.—Շամպանիում, Լակուրտին ամրութեան շուրջ շարունակվում է յամառ կռիւ համեմատական աջողութեամբ։ Մեր զօրքերի ցոյց տուած յամառ դիմադրութիւնը և շեշտակի արշաւը ընկճեցին թշնամու հակայարձակումների թափը։ Մասիժից դէպի հիւսիս-արևելք անակնկալ յարձակումով մենք ձեռք ձգեցինք գերմանական խրամատներից մինը։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են. «Գարդա լճի և Ադիժէ գետի միջև մեր զօրքերը իջնելով Մոնտէ-Ալվիանիից թշնամու խաչաձև կրակի տակ՝ հոկտ. 11-ին գրոհ տալով վերցրին թշնամու դիրքերը Դոսսօ-Կազինի մօտ։ Այդպիսով մենք տիրում ենք այն ճանապարհին, որ գնում է Ռիվից դէպի ծովը և Նագօյի վրայով։ Թշնամու ամրութիւնների մէջ մենք ձեռք ձգեցինք զէնք, ռազմամթերք, ձեռքի ռումբեր, կաթսաներ, վահաններ, պրօժեկտօրներ և այլն։

Լոյս հոկտ 11-ի գիշերը թշնամին երեք յարձակում գործեց մեր դիրքերի դէմ Ռիէնցա հովտի վերին մասում, բայց բոլոր յարձակումները վանվեցին։ Հետապնդելով փախուստի դիմող թշնամուն, զօրքերը մօտեցան նրա ամրութիւններին և լայն անցքեր բացին նրա խաւթերի մէջ։

Փէլլա հովտում մեր զօրքերը շարունակում են առաջանալ։ Լումից գիւղը հրդեհված է։ Մոնտենէրո շրջանում թշնամին երկու անգամ յարձակում գործեց մեր դիրքերի վրա Մրզլի մօտ, բայց վանվեց և թողեց 21 գերի։ Անհամեմատ շեշտակի յարձակում թշնամին գործեց Վէգլի լեռան վրայից. այստեղ թշնամուն աջողվեց ճեղքել մեր զօրաճակատը և գրաւել մեր դիրքերի մի մասը. բայց շուտով մեր քաջարի ալպեական զօրքերը շեշտակի յարձակումով խլեցին կորցրած խրամատները, գերելով 70 մարդ. կռւի դաշտում մենք թաղեցինք թշնամու 302 դիակ։

Պլավի շրջանում մենք երէկ վերցրինք թշնամու ուժեղ դիրքերից մինը՝ Կազա-դի-Ռուտան։ Թշնամին փորձեց հակայարձակումով ետ վերցնել այն, բայց վանվեց ծանր կորուստներով։

Կարսոյում ամբողջ օրը տեղի էր ունենում կատաղի թնդանօթային կռիւ. մեր հրետանիների կրակը մեծ հրդեհ առաջ բերեց Դուինօյի շրջակայքում։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 հոկտեմբերի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հեռագրում են, որ բարոն Վագենհէյմը վախճանվել է Կ. Պօլսում։

ՆԻՒ ԵՕՐԿ.—Գերագոյն Ֆեդէրալ դատարանը զբաղված է գերմանական գործակալների գործի քննութեամբ։ Այդ գործակալները գաղտնի ագիտացիա են մղել, նպատակ ունենալով թշնամութիւն սերմանել Միացեալ Պետութիւնների և Մեքսիկայի միջև այն յոյսով, թէ Միացեալ Պետութիւնները ստիպված կը լինեն գործ դնել իրանց զօրքը սահմանի մօտ, իսկ Գերմանիան օգտվելով այդ հանգամանքից կարող կը լինի լուծել բազմաթիւ վէճեր Միացեալ Պետութիւնների հետ։

Ձերբակալված գերմանացիները Ֆայի և Շոլցի բնակարանում գտնված պայուսակները լի էին պայթուցիկ նիւթերով։ Պնդում են, որ Ֆայը պաշտօնավարում էր գերմանական արտաքին գործերի մինիստրութեան մէջ և Միացեալ Պետութիւններում գտնվում էր ապրիլից։ Շոլցն ապրում է Ամերիկայում մի քանի տարի։ Ֆայը յայտնեց, որ նա Ամերիկա է եկել գերմանական կառավարութեան գաղտնի յանձնարարութեամբ։ Ոստիկանական իշխանութիւնները յայտնեցին, որ Ֆայը բացատրութիւն տուեց իր մօտ գտնված դժոխային մեքենաների մեխանիզմի մասին. Նրա ասելով այդ մեքենաները ոչնչացնելու էին այն նաւերը, որոնց մէջ և գտնվեցին նրանք։ «Ուօրլդ» լրագրի ասելով, Ֆայը եկած է եղել յատկապէս պայթեցնելու այն նաւերը, որոնք փոխադրելու էին ռազմամթերք։

ԱԹԷՆՔ.—Երեկոյեան գահաժառանգը շտաբի ուղեկցութեամբ մեկնեց Սօլուն։

Այս շաբաթվայ ընթացքում թագաւորը դիտեց Աթէնքում գտնվող զօրքերին։

ԼՕՆԴՕՆ.—Լրագիրները յայտնում են, որ թագաւորի կոչից յետոյ ահագին թւով երիտասարդներ մտնում են զօրքի մէջ։

Մամուլի բիւրօն յայտնում է, որ թագաւորը գտնվում է Ֆրանսիայում զօրքին այցելելու համար։ Թագաւորը յոյս ունի այցելել նաև դաշնակիցների զօրքերին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ֆինանսների մինիստրութեանը կից հաստատված մասնաժողովն աւարտեց հարկային սիստեմը վերափոխելու հարցի քննութիւնը։ Բացի նախագծված մի քանի նոր անուղղակի հարկերից, մասնաժողովը հնարաւոր է գտնում աւելացնել գոյութիւն ունեցող մի քանի ակցիզները, օրինակ սպիրտի և ծխախոտի բարձր տեսակների վրա։

Մինիստրների խորհուրդը հոկտ. 13-ի նիստում հաւանութիւն տուեց մինիստրութիւնների հետևեալ առաջադրութիւններին. 1) Ռոմանովեան կոմիտէտի գործունէութիւնը տարածել նաև փախստականների երեխաների վրա, 2) յատկացնել հակաժանտախտային մասնաժողովին 5 միլիոն րուբլի, որից մի միլիոնը պէտք է տրվի զէմստվօներին և քաղաքներին իբրև օժանդակութիւն, 3) շարունակել Լեհական Թագաւորութեան և Խօլմի նահանգներում ընդհանուր և մասնակային մորատօրիումների գործողութիւնը մինչև 21 ամիս։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պարիզի և Նիւ-Եօրկի միջև աջողվել է խօսել անթել հեռագրով։

◆ Հռոմից տեղեկացնում են, որ Ռումինիան պայման է դրել դաշնակիցներին՝ ուղարկել Բալկանները 400 հազար զինուոր, որից յետոյ նա իր զօրքերը կուղարկէ Կարպատները։

◆ «Թայմսը» երաշխիքներ է պահանջում, որ յունական կաբինէտի մէջ կայանալիք փոփոխութիւնները չեն ազդի դաշնակիցների ռազմական գործողութիւնների վրա։

◆ «Р. Инв.»-ը գրում է, որ Իլլուկստից մինչև Դվինսկ 16 վերստ է և այդ երկու կէտը իրարից բաժանում է ահագին անտառ, որից ի հարկէ մեր զօրքերը կօգտվեն ըստ հարկի։ Սպասվում է, որ գերմանացիք պաշարեն Դվինան՝ Դվինսկից դէպի հիւսիս որևէ մի տեղում։ Դվինայի աջ ափը աւելի բարձր է, քան ձախը, ուստի և թշնամին հաւանօրէն այդտեղ խոշոր կորուստներ կունենայ։

◆ Ռազմագէտները կարծում են, որ Իկսկիւլից դէպի հարաւ տեղի են ունենում չափազանց կարևոր գործողութիւններ թէ իրանց ծաւալով ու թէ իրանց հետևանքներով, քան թէ միացած ամբողջ Դվինայի զօրագծի վրա։ Այդ գործողութիւնների բնոյթը պարզ կը լինի, եթէ յիշենք, որ արդէն մի անգամ այդ տեղում մենք ստիպված եղանք ետ քաշվել դէպի աջ ափը, բայց այդ հանգամանքը մեզ արգելք չեղաւ նորից վերադառնալ ձախ ափը։ Եթէ այժմ էլ հարկ լինի ետ քաշվել ուրիշ ռազմավայրերում, այդ չի նշանակի, թէ Ռիգան և Դվինսկը մենք կորցնում ենք։

◆ Քաղաքական շրջաններում հերքվում են այն լուրերը, թէ արտաքին գործերի մինիստր Սազոնովը մեկնելու է Պարիզ, մասնակցելու համար քառեակ համաձայնութեան դիպլոմատիայի ներկայացուցիչների կոնֆերենցիային։

◆ «РѢЧЬ»-ի ասելով՝ թշնամին ահագին զօրքեր է կենտրոնացրել՝ ինչ գնով էլ որ լինի Դվինսկը գրաւելու համար։

◆ «Н. В.»-ի մէջ «Հասարակականութեան քննութիւնը» յօդուածի մէջ Մէնշիկովը յայտարարում է զեմստվային ու քաղաքային միութիւններին լուել անհաշուետուութեան ու արքունի միլիոնների ապօրինաբար ծախսելու մասին եղած յայտարարութիւններին և ապացուցել իրանց լիակատար ամբասիրութիւնը։

◆ Մինսկի վրա գերմանացիք նետել են 13 բռնկվող ռումբ։

◆ Բուրգասում և Վառնայում գտնվում են գերմանական զօրքեր՝ ռուսների դէմ կռուելու համար։

◆ Դէդէաղաջում դաշնակիցների ռմբակոծութիւնից քանդվել են կամուրջը, երկու կայարաններ և գործարաններ։

◆ Տէկկէան գրաւած աւստրիացիք դիմում են դէպի Կլադովա։

◆ Ցունաստանում սկսել է հակադինաստիական շարժում։

◆ Ռիգայի արուարձանները դատարկվել են։ Ոստիկանատները փակվել են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

(«Daily News»-ի սեպտ. 25-ի թիւի հեռագիրները)

Այն սարսափելի տեղեկութիւնները, որ լօրդ Բրայս հաղորդեց Հայաստանի կոտորածներու մասին, որոնք լոյս տեսան երկու օր առաջուայ «Daily News» ին մէջ, լիովին կը հաստատուին ուրիշ աղբիւրներէ մեզ հասած տեղեկութիւններով։ Ըստ լօրդ Բրայսի հաղորդածին՝ սպաննուած և աքսորուած մարդոց, կանանց և երախայոց թիւը 500,000-ը կանցնի։ Ստացուած նոր տեղեկութիւնները կը հաստատեն այդ թիւը։

Բացի շատ մը հազարաւոր սպաննուածներէ,—կըսէ «Միացեալ Մամուլի» թղթակիցը,—կէս միլիոնէ աւելի հայեր ղրկուած են աքսոր դէպի հարաւ։ Այս վտարումը կատարուած է կատարեալ սիստեմատիկ եղանակով մը սկսեալ ապրիլ ամիսէն։

Թիւրք քաղաքական կուսակցութեան ոևէ մէկ անդամի ցուցմունքով կը բանտարկուէին բազմաթիւ հայեր այն պատրուակով, որ անոնց քով կը գտնուէին զէնքեր և կամ գրքեր։ Այս անհիմն լինելով՝ սկսան պատճառ բռնել անոնց հարուստ կամ դիրքի տէր լինելը։ Նախ և առաջ աքսորելու պատրուակով բնակավայրերէն դուրս քշեցին ամէն անոնք, որոնք բանտարկուած չէին առ ի չգոյէ ոևէ յանցանքի։ Այնուհետև սկսան ջարդել, և ոչ ոք կրցաւ ազատիլ ջարդէ։

Մի փոքրիկ աղջիկ կը պատմէ, թէ ինչպէս Մարզվանի, Ամասիայի և Թօքաթի հայ բնակիչները երբ բերուեցան Շէհիր-Կըշլա (Սեբաստիոյ և Կեսարիոյ միջև), կառավարչատան դիմաց երկու սեռի երախաները խլեցին իրենց մայրերու գրկէն և փակեցին սենեակներու մէջ։ Իսկ կարաւանը շարունակեց իր ճամբան առանց երախաներու։

Այնուհետև շրջակայ թիւրք գիւղերը լուր ղրկուեցաւ, որ ամեն ոք ազատ է իր ուզածն ընտրելու մնացեալներու մէջէն։ Կարաւաններու կընկերակցէին թիւրք զինուորականներ։ Ամեն մի քաղաք կամ գիւղ հասնելուն կանանց և երախայոց ի ցոյց դրին կառավարչատան առջևը, որպէս զի մահմեդականները կարողանան իրենց ուզածը, հաւնածը ընտրել։ Այն կարաւանը, որ դուրս եկաւ Բաբերդէն, այս եղանակով հետզհետէ պակսեցաւ, իսկ մնացեալ կանանց և երախայոց Երզնկայի առաջ Եփրատ գետը նետեցին Կարա-Բողազ կոչուած տեղի առաջը։

Գերմանացի գթութեան երկու քոյրեր սաստիկ ազդուած այս բարբարոսութիւններէն՝ հրաժարեցան իրենց պաշտօններէն, գացին Կ. Պոլիս և անձամբ այցելելով մի քանի դեսպանատուններ՝ պատմեցին իրենց տեսած սոսկալի տեսարանները։

Այս բարբարոսութիւնները տեղի ունեցան ամեն տեղ և այսօր այդ նահանգներու ճանապարհները լեցուած են հայոց դիակներով։

Զանազան գիւղերու մէջ ալ, ուր բանտերու խորերու մէջ կային մոռցուած հայեր, կախաղան հանուեցան։ Կեանքերնին փրկելու միակ փափագով շատ տեղեր հայերը ուզեցին մահմեդականութիւն ընդունիլ, բայց այս անգամ չընդունուեցան այն յօժարակամութեամբ, որ նախորդ մեծ կոտորածներու ժամանակ տեղի կունենար։

Խարբերդի մէջ թոյլ չտրուեցաւ մահմեդականութիւն ընդունիլ, իսկ կանանց պայման դրին, որ կարող են մահմեդականութիւն ընդունիլ այն պարագային միայն, երբ գտնուին զիրենք կնութեան վերցնող մահմեդականներ։ Շատ հայ կանայք նախընտրեցին իրենց երախաներով միասին Եփրատ գետը նետուիլ և կամ անձնասպան եղան իրենց տուներուն մէջ։ Եփրատը և Տիգրիսը հազարաւոր հայերու գերեզման են։

Շաբին-Գարահիսարի հայերը ընդդիմանալով զինաթափ ըլլալ և աքսոր երթալ՝ ենթարկուեցան ռմբակոծման. այնուհետև թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերու հայութիւնը, նոյնիսկ եպիսկոպոսները անխնայ կոտորուեցան։

Ակներև է, որ թիւրք կառավարութիւնը որոշած է միանգամայն բնաջինջ ընել հայութիւնը ամբողջ Թիւրքիոյ մէջ, մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար հայկական հարցին։ Եւ իր այս ծրագիրը սկսած է իրագործել նոյնիսկ Կ. Պոլսոյ արուարձաններու մէջ։

Վաշինգտոնէ Ռէյտէրի հեռագրական գործակալութիւնը կը հեռագրէ հետևեալը։

«Միացեալ Պետութիւններու կառավարութեան դիմումներ կըլլան ամերիկացիներու կողմէ հայերու մասսայական կոտորածները արգիլելու համար։ Կառավարութիւնը հրահանգած է Կ. Պոլսոյ իր դեսպան մր. Մորկէնտաուին քննութիւն կատարել։ Թիւրքիոյ տրուած նախորդ բողոքն ապարդիւն մնաց։

«Այստեղ հասած տեղեկութեանց համեմատ, 450,000-է աւելի հայեր սպաննուած են և 600,000 մնացած են անտուն կամ ղրկուած են աքսոր։ Մի քանի ամերիկացի բարեգործներ պատրաստակամութիւն յայտնած են գումարներ նուիրելու, հանգանակութիւն կազմելու հալածուած ժողովուրդին Ամերիկա գաղթեցնելու համար, որու մասին վերջերս մր. Մորկէնտաու մատնանշած էր, թէպէտև պաշտօնապէս ծրագիր մը մշակուած չէ ընդհանուր հայկական գաղթականութեան համար։

Թարգմ. Տ. Գ.

„РѢЧЬ"-Ի ՅՕԴՈՒԱԾԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ բան է իսկապէս հայոց հարցը։ Դա,—պատասխանում է Ֆրանկֆուրտի լրագիրը,—էապէս «մի դուռն է, որը Անգլիան միշտ բաց էր պահում նրա համար, որ ազատ կերպով միջամտի թիւրքական գործերին»։ Թիւրքերի դէպի հայերն ունեցած ատելութեան պատճառները ինչպիսիք են։ Դրանք էլ պարզ են ամենքի համար. առաջինը՝ հայերը «լրտեսներ» են և «յեղափոխականներ», իսկ երկրորդ՝ յայտնի է, որ հայերին Արևելքում տանել չեն կարողանում նրա համար, որովհետև «շնորհիւ իրանց մտաւոր զարգացման և առևտրական տաղանդի, հայ վաճառականները, առևտրականները, սեղանաւորները և կոմիսիոներները աջողութեամբ մրցում են ծանրաշարժ թիւրքերի հետ։ Եւ զարմանալի չէ, որ գերմանական առաջադէմ շրջանների այսօրինակ տրամադրութեամբ պաշտօնական Գերմանիան անտարբեր է դէպի թիւրքահայերի աղէտները և որ Կ. Պոլսի գերմանական և աւստրիական դեսպանների երբ յայտնած «բողոքները» ոչ ոքի կողմից չեն նկատվել։

Բայց Թիւրքիան այժմ ունի մի դաշնակից ևս, որը պէտք է մի փոքր այլ կերպ ընդունի հայերի տանջանքները, որոնք տանջվում են թիւրքական բռնութեան տակ։ Երբ բուլգարական զօրահաւաքից մի փոքր առաջ Սօֆիայի հայերը ընդդիմադիր կուսակցութեան պարագլուխների միջոցով մինիստր-նախագահ Րադոսլաւովին ներկայացրին մի մեմորանդում թիւրքական գազանութիւնների մասին, նրանք հաւանօրէն մտածում էին, որ ջերմ համակրութեան կը հանդիպեն ժողովրդի կողմից, որը 40 տարի առաջ ապրել է նոյնը, ինչ որ հիմա ապրում են հայերը, և հայերի նման օգնութիւն է խնդրել Ռուսաստանից ու Անգլիայից։ Մենք չը գիտենք, թէ կարելի է արդեօք աւելի լաւ արտայայտել հայ և բուլղար ժողովուրդների վիճակի նմանութիւնը, քան այդ արել է նոյն լօրդ Կրոմէրը. «Մենք ամենքս լսել ենք,—ասաց նա լօրդերի պալատում,—որ Մերձաւոր Արևելքի մի պետութիւն, որը կառավարվում է օտար ծագում ունեցող մի իշխանի ձեռքով և գերմանասիրական խիստ տենդենցներով, պատրաստվում է կատարելու ոչ միայն քաղաքական մի մեծ սխալ, այլև քաղաքական ամենասև ապերախտութեան մի գործողութիւն, որպիսին երբևիցէ տեսել է պատմութիւնը։ Այն, ինչ որ այստեղ ասում ենք մենք, հազիւ թէ հասնի բուլգար ժողովրդին։ Բայց մենք պարտաւոր ենք ամեն ինչ անել, որպէսզի ցոյց տանք բուլղարներին, թէ ինչպէս է վերաբերվում մի ուրիշ քրիստոնեայ ժողովուրդ այն պետութեանը, որի հետ նրանք, բուլգարները, պատրաստվում են անբնական դաշնակցութիւն կազմել։ Բուլգարները անցեալներում այնպէս տանջվել են թիւրքերից, որ անհնարին է թոյլ տալ, որպէսզի նրանք չը զգան ոչինչ դէպի անբախտ հայերը, որոնք տանջվում են օսմանեան կայսրութեան մէջ»։

Տարօրինակ կը լինէր, ի հարկէ, մտածել, որ հայերին ցոյց տրված ողորմածութիւնը կարող կը լինէր Ֆերդինանդի կառավարութիւնը ետ պահել «հակաբնական դաշնակցութիւնից» բուլգարների նախկին ճնշողի հետ։ Սակայն այս, այնու ամենայնիւ, մի շատ հետաքրքրական դէտալ է միջազգային դրութիւնից, որը պէտք է ընդգծել, և որը կանցնի պատմութեան մէջ, որ Բուլգարիան Թիւրքիային ձեռք է մեկնում այն ժամանակ, երբ նրա ազատարար Ռուսաստանը և «մեծ բուլգարասէր» Գլադստոնի հայրենիքը միասին կռւում են նրա համար, որ թիւրքական ճանկերից կորզեն ազատութեան և անկախ գոյութեան ծարաւի մի ժողովուրդ ևս։

ՆՈԹԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԱՆՑԵԱԼԻՑ

III

Մինչ այդ, 1765 թւին հիմնված էր Պոլսում ռուսաց դեսպանատունը Միջերկրական ծովի ռուսական առևտրի աջողութեան համար։ Պէտք է նկատել, որ Ռուսաստանը հեշտութեամբ կատարեց Ղրիմի գրաւումն, որովհետև Աւստրիան Անգլիայի հետ քաջալերում էին Ռուսաստանին. սակայն Ռուսաստանը չը բաւականացաւ այդ աջողութիւններով և աւելի առաջ գնաց 1770 թւի իր ծովային էքսպեդիցիայով, որը անցնելով Լամանշից հասաւ Միջերկրական և կրակեց Դարդանէլը. այդ էքսպեդիցիան մի նպատակ ունէր, այն է՝ ձեռք բերել Միջերկրական ծովում մի կղզի՝ որպէս կայան, իսկ ջրերում էլ ազատ երթևեկելու իրաւունք պատերազմական նաւերի համար. այդ առիթով Եկատերինէ կայսրուհին այսպէս է գրում Օրլովին. «Իմ միտքն այն է, որ դուք աշխատէք մի նաւահանգիստ ստանալ կամ որևէ կղզում կամ թէ հաստատուն հողամասի վրա»։ Ֆրանսիան ու Սպանիան սաստիկ վրդովված էին ռուսական էքսպեդիցիայի դէմ Միջերկրական ծովում. նրանք որոշել էին միացեալ նաւատորմով դիմադրել ռուսական նաւատորմին Միջերկրականում, որը սպառնում էր սուլթանին. սակայն Անգլիան մի վերջնագրով յայտնեց Ֆրանսիական կառավարութեան, որ նման գործողութիւնները, ուղղված՝ ռուսական նաւատորմի ազատ գործողութիւնների դէմ Միջերկրականում, կը նկատվեն որպէս թշնամական գործողութիւններ Անգլիայի դէմ։ Այստեղ մենք նորից պիտի շեշտենք, որ 1750—70 թւականները Անգլիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները չափազանց լարված էին Հնդկաստանի կալուածների շնորհիւ. այդ կռիւները տևեցին Հնդկաստանում մօտ մէկ տասնեակ տարի, որոնց մէջ անգլիացիք վերջնականապէս յաղթեցին ֆրանսիացիներին՝ ոչնչացնելով վերջինի ծովային ուժը. 1763 թւին կնքըվում է Փօնթիշերիի դաշնագրութիւնը, որի պայմանների համաձայն ֆրանսիացիք պէտք է ոչնչացնէին այնտեղի պատերազմական ամրութիւնները, իսկ 1870 թւին լիկվիդացիայի է ենթարկվում ֆրանսիական Արևելա-Հնդկական Ընկերութիւնը։ Այսպիսի հանգամանքներում, Ռուսաստանը, հիմնված՝ Անգլիայի և Աւստրիայի բարեկամութեան վրա, մօտալուտ է զգում իր դարաւոր երազի իրականացումը այն է անցնել Միջերկրական ծով և մի կայան ձեռք բերել այնտեղ, ազատ երթևեկելու ջրերում. բայց անսպասելի կերպով ծագեց Ամերիկայի ապստամբութիւնը։ Անգլիան ամբողջապէս կլանվեց այդ խնդրով, և ռուսական ծրագիրները նորից փշրվեցին։

Դրանից յետոյ, Աւստրիայի համար քաղաքականութեան նոր դարագլուխ է սկըսվում, որը միանգամայն որդեգրում է «արևելեան հարցում» դիպլոմատ մախինացիան։ 1791 թւին նա նորից յաղթվում է Թիւրքիայից, վերադարձնելով վերջինիս նրա բալկանեան հողերը. նա, որ մինչ այդ՝ ազգերի և ժողովուրդների ազատագրութեան լօզունգով էր հանդէս գալիս Թիւրքիայի դէմ իր մղած պատերազմների մէջ, երբ Ռուսաստանը Սերբիայի ազատութեան հարցը դրեց, Աւստրիան միանգամից խըրտնեց. նա Սերբիայի ազատութեան մէջ տեսնում էր իր առաջխաղացման դէմ մի նոր պատնէշ, որը մշտապէս նրան հեռացնում էր արևելեան հարցից և ստեղծում վերջինիս կողքին մի նոր բալկանեան հարց։ Աւստրիան զգում էր վերջապէս, որ Թիւրքիայից մի թիզ հող անգամ այլևս չի կարող նա պոկել առանց միւս պետութիւնների համաձայնութեան, ուստի նա հրաժարվեց իր նախկին աւանդական դերից ու մտաւ Թիւրքիայի շուրջը բոլորած եւրոպական կոնցերտի մէջ, որ մինչև այսօր էլ նրա արժանաւոր անդամն է։

Ռուսաստանն ևս իրազեկ էր այն քաղաքական կոնիւկտուրային, որ տիրում էր Թիւրքիայում. այսպէս է գրում 1771 թւին Պանինը Օրլովին. «Մենք այժմ գործով ենք զգում այն, որ թիւրքական մոնարխիան ամբողջ Եւրոպայի քաղաքական միութեան իրական անդամն է, և միայնակ նրա հետ, ինչպէս առաջ էր, այժմ չի կարելի գործ ունենալ առանց ուրիշների (եւրոպ. պետութիւնների) մասնակցութեան և առանց նրանց շահերն ի նկատի ունենալու։

Մոսկվա. Ալ. Մել.-Աղաջ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Նիժնի-Նովգորոդից, Սիրական Շահինեանից 10 ր.։

ՑՈՒՑԱԿ

Ցաօ-Հաւզի նուիրատուների

(Օգնութ. հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 193)

Ռ. Միրզաեան 7 ր. 50 կ., Դ. Դաւիթեան, Ե. Սաֆարեան, Ն. Սարգսեան, Դ. Սարգսեան 5-ական ր., Ի. Յարութիւնեան, Մ. Շաքարեան, Մ. Գիւլնազարեան 2-ական ր., Մ. Յարութիւնեան 1 ր.։ Գումար 34 ր. 50 կ., որից պոստի և այլ մանր ծախս եղել է 50 կ., իսկ խմբագրութեանս ուղարկվել է 34 ր.։

ԳՈՐԾ ԵՒ ԽՕՍՔ

(Նուիրում Թիֆլիսի հայ հոգևորականութեան)

Ինչո՞ւ Քրիստոս մի հատիկ է և աննման։ Որովհետև Նա ինչ որ քարոզում էր, գործով և կատարում էր։ Ի հարկէ, ոչ ոք Քրիստոս լինել չէ կարող, բայց ամեն մի քրիստոնեայ պարտաւոր է այն չափով, որքան հնարաւոր է մարդկայնօրէն հետևել իր Փրկչի քարոզին և գործին։ Եւս առաւել այդ պարտադիր պէտք է լինի նրանց համար, որոնք իրանց՝ Քրիստոսի աշակերտ են համարում, օրինակ, եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների համար։

Սակայն իրականութեան մէջ մենք դրա հակառակն ենք տեսնում, գոնէ Թիֆլիսում։ Այստեղ թէ առաջնորդը, թէ զանազան քահանաներ շարունակ կոչեր են անում, յորդորում են հօտը լինել կարեկից, օգնել թշուառ հայ փախստականներին։ Եւ սակայն եղել են դէպքեր, երբ հայ թշուառ փախստականը մեռել է, և չէ գտնվել մի քահանայ, որ յանձն առնէ գնալ նրան թաղել, ու մեռելը օրերով մնացել է։ Այսպէս պատահեց են օրերս, երբ խմբագրատուն մտաւ մի փախստական, յայտնելով որ մի թշուառ կնոջ երեխան 4 օր է մեռել է, հոտելու վրա է և քահանայ չէ գալիս թաղելու։ Ում դիմում է, ասում են՝ մեր գործը չէ, մեր ծուխը չէ։

Առաջարկում ենք Թիֆլիսի հայ կոնսիստորիային և առաջնորդարանին կարգադրել, որ Թիֆլիսի բազմաթիւ քահանաները հերթով ձրիաբար կատարեն փախստական մեռեալների թաղումը։ Պէտք է քաղաքի ամեն մի թաղամասում նշանակել մի քահանայ։ Եթէ դրանք անպատճառ կամենում են փող ստանալ, թող Հ. Բ. Ընկերութիւնը կամ քաղաքային յանձնաժողովը վճարեն ամեն թաղման համար 3 ր.։

ԻՆՔՆԱԿՈՉ ՓՐԿԻՉՆԵՐ*)

I

Ռուս-թիւրքական պատերազմի սկսված օրից ամեն տեղ, ուր քիչ թէ շատ գիտակից հայութիւն կար, ձգտում առաջացաւ կազմակերպելու հասարակութիւնը, միացնելու նրա անջատ ուժերը, որովհետև ամենքն զգում էին, թէ որպիսի ճակատագրական անակնկալների առաջ ենք կանգնած մենք. բոլոր բանիմաց տարրերը գիտակցում էին, թէ որքան անզօր պիտի լինի գալիք ահաւոր դէպքերի հանդէպ մի անկազմակերպ հանրութիւն։ Ամենքն զգում էին, որ զօրաւոր ուժերով և կուռ կազմակերպութեամբ միայն կարելի կը լինի որևէ ներգործական դեր կատարել այս ահեղ ժամանակներում։

Եւ ինչպէս չը գիտակցէին ու չը զգային, երբ բիրտ ուժը տապալում էր պետական ամուր կազմակերպութեան մէջ ձուլված ազգերին։ Մեր աչքի առաջն էր արիւնաներկ Բելգիան։

Ի՞նչ կարող էր անել այսպիսի պարագաներում մի ազգ, որի միակ ազգային կազմակերպութիւնը եկեղեցին է. մի ազգ, որի քաղաքական հասունութիւնը աւելի քան կասկածելի է. մի ազգ, որ իր տառապանքն է միայն վահան դարձրել իր համար. վերջապէս մի ազգ, որ հոգեկան սնանկութեան դուռն է հասել, որի կուլտուրական տարրերը կատարելապէս ապազգայնացել են։ Անշուշտ այդպիսի մի ազգ չը պիտի դիմանար գալիք դէպքերի նոյն իսկ առաջին հարուածներին, եթէ չը ստեղծէր մի կուռ կազմակերպութիւն և ի մի ձուլվէր այդ կազմակերպութեան մէջ։ Այդ կազմակերպման կարիքը պիտի զգար ամենից շատ, ի հարկէ, այն ինտելիգենցիան, որ դեռ չէր հրաժարվել ազգային արժէքներից։ Այդ ինտելիգենցիան պիտի ձգտէր անյետաձգելի կերպով կազմակերպելու հասարակութիւնը, ոչ մի ջանք չը պիտի խնայէր համերաշխութեան հող ստեղծելու հնարաւորութեան տարբեր խաւերի մէջ, որպէսզի հնարաւոր լինի միաձոյլ ուժերով գործելու։ Պէտք էր, որ մեր ինտելիգենցիայի լաւագոյն տարրերը ազգային անդառնալի աղէտների հանդէպ կարողանային անել իրանց մէջ վեհոգի պատրաստակամութիւն՝ ազգովին գործելու, և այն՝ ոչ ձևականօրէն միայն և թղթի վրա, այլ անկեղծ կերպով։

Պատերազմի սկզբից իսկ մեր մամուլը կոչ արեց այդպիսի համերաշխութեան և միութեան, բայց բոլորն ընդունելով այդ կոչը շարունակում էին գործել հին եղանակով. և այդպիսով չը կայացաւ այն համազգային կազմակերպութիւնը, որին ձգտում էր հայութեան անկեղծ և գիտակից մասը։ Մենք կարծում էինք, որ անհրաժեշտ և անյետաձգելի է ստեղծել մի համազգային ընդհանուր ընտրված մարմին, որը պիտի հայութեան գլուխն անցնէր այս արհաւրալից ժամանակներում։

Նրանք, որոնք չէին կամենում (բայց կեղծաւորաբար պնդում էին, որ կամենում են) այդպիսի մի հիմնարկութիւն տեսնել, շարունակ ակնարկում էին քաղաքական պայմանները և այդպիսի համազգային հիմնարկութիւն ստեղծելու անհնարութիւնը։ Եւ դա անում և ասում էին նրանք, որ սովորաբար իրանց արմատական են յորջորջում։ Մինչդեռ միթէ պարզ չէր, որ երբ մի ամբողջ ազգ վտանգի է ենթարկում անգամ իր ֆիզիքական գոյութիւնը, երբ մի ամբողջ ազգ վկայում է պետութեան (վկայում է արիւնով ու տանջանքով) իր համակրութիւնը, այդ ազգն իրաւունք ունի բացարձակօրէն պահանջելու, որ թոյլ տրվի իրան ազգովին կազմակերպվելու։

Բայց նրանք, որ արմատական են ձևանում, իսկ իրօք զանազան եպիսկոպոսների փէշերի հովանին են որոնում, բնական է՝ չը պիտի բռնէին այդ ճանապարհը։ Եւ նրանք գերադասեցին գնալ հին, ծեծված, անօգուտ ուղիներով՝ ողորմութիւն խնդրելու, պետական բարձրաստիճան աղուէսների շեմքերը մաշելու, նրանց թակարդ-սալոններում ճեմելու ճանապարհը։

Այդ մարդիկ կռուի դաշտ ուղարկեցին ազնուագոյն ուժեր, բայց միթէ այդ ազնուագոյնների առաքինութիւնը պիտի լուայ նրանց քաղաքական վատոգի, վախկոտ և ազգակործան գործունէութեան արատները։ Բնաւ։

Սակայն շատ վայրերում հայութիւնը գիտակցեց ահաւոր ժամանակի պահանջը և աշխատեց կազմակերպել տեղական հայութիւնը։

Այդպէս, օրինակ, Մոսկվայում ռուս-թիւրքական պատերազմի առաջին իսկ օրերում Մոսկվայի բոլոր հայերի և հայուհիների ժողով գումարվեց, որից յետոյ կանոնաւոր կերպով կազմակերպվեց այդ գաղութը, ընտրելով հասարակութեան բոլոր խաւերից միանգամայն իրաւասու մի մարմին, այն Մոսկվայի Հայկական Կոմիտէն, որի բազմարդիւն, կարելի է ասել՝ փայլուն գործունէութիւնը բոլորիս աչքի առջևն է և որի բարոյական հեղինակութիւնը անհերքելի և բարձր։

Վ. Տ.

Պետրօգրադ

ԱՋԱՐԱՑԻՆԵՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԸ

Վերջացաւ աջարացիների՝ Արդանուշի 49 բնակչի գործի քննութիւնը։

Դատարանը 33 հոգու մեղաւոր ճանաչեց թշնամու զօրքի մէջ մտնելուն համար և դրանց բոլորին իրաւունքներից զրկելով, երեք հոգուն դատապարտեց մահվան, կախաղանի միջոցով։ 15 տարով տաժանակիր աշխատանքի դատապարտեց 3 անչափահաս մեղադրեալի, իսկ մնացած բոլոր մեղադրեալներին՝ ցմահ տաժանակիր աշխատանքի։ Իսկ 16 հոգու արդար ճանաչեց։

Այս դատավճիռը կայացնելով՝ դատարանը սա ներկայացրեց Փոխարքայի հայեցողութեան, միաժամանակ միջնորդելով Ն. Կ. Բ. Մեծ Իշխանի առաջ, որ դատապարտվածների վիճակը թեթևացվի։

—

Հոկտ. 9-ին Բաթումի տների պատերին փակցված էր Միքայէլեան բերդի կօմենդանտի հետևեալ հրամանը.

«Սրանով յայտարարելով պատճէնը կովկասեան բանակի շտաբի զինուորական մասի կառավարչի հեռագրի հոկտ. 4-ից, № 29305, որով Ն. Կ. Բարձրութիւնը թեթևացնում է դատապարտվածների վիճակը, յայտնելով ի գիտութիւն Բաթումի շրջանի ամբողջ ազգաբնակութեան, ես խորապէս համոզված եմ, որ նա ամբողջ սրտով կը համակրի և կը գնահատի Նրան ցոյց տրված ողորմածութիւնը, և ապագայում նրա բարեմիտ մասը տատանվողներին ետ կը պահի յանցաւոր գործերից, որոնց համար այժմ բերդային դատարանը ստիպված է աջարացիներից մի քանիսին դատապարտել անարգ պատժի։

«Բերդային դատարանի որոշման առիթով և միջնորդութեան համաձայն՝ մեղմացնել վիճակը Վերին Աջարիայի դատապարտված բնակիչների՝ Մելաձէի, Գեօրգաձէի, Իրեմաձէի, Դիվլիձէի, Մեխաշիձէի և Բօլկվաձէի, Օզօտաշփաշ Դիլաւար Հրամանատարը հետևեալ վճիռն է դրել.

«Ուշադրութեան առնելով դատարանի կողմից վկայված այն փաստը, որ դատապարտեալները զինուորական ծառայութիւններ են մատուցել մեր զօրքերին, ես առաջին անգամը հնարաւոր եմ գտնում մեղմացնել զինուորական դատարանի վճիռը, բոլոր մեղադրեալների համար սահմանված մահապատիժը փոխարինելով տաժանակիր աշխատանքի 20 տարով։ Իմ վճռի այսօրինակ պատճառը պէտք է յայտարարվի աջարացիներին ցուցմունքով, որ կրկնվելու դէպքում ոչ մի զիջումի յոյս չեն կարող ունենալ։ Գլխաւոր Հրամանատար գեն.-ադիւտանտ Նիկոլայ, 3 նոյեմ. 1915 թ.»։

---

*) Այս յօդուածի՝ Պետրօգրադի հայկական կոմիտէի մասին գրածների պատասխանատուութիւնը թողնում ենք հեղինակի վրա։ Ծան. խմբ.

«Ցանկանում եմ Աջարիայի ազգաբնակութեանը կարգադրելու և յայտարարելու ի դէպս պետական դաւաճանութեան կրկնութեան։ Մօկալսկի։»

«Ստորագրել է Միքայէլեան բերդի կոմենդանտ, Բաթումի շրջանի զօրքերի պետ և Բաթումի շրջանի ընդհանուր նահանգապետ գեն.-մայոր Լեախով։»

Այս հրամանը վերաբերում է աջարացիների դաւաճանական գործի դատավարութեան ժամանակ դատապարտվածներին։

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՑԱՒԵՐԻՑ

V

Ռեպերտուար

Միանգամայն տարօրինակ կը թուար մեզ, եթէ մեր խառնաշփոթ գործունէութեան մէջ ռեպերտուարը կանգնած լինէր իր կոչման բարձրութեան վրա, որովհետև գործի զարգացման գլխաւոր յենակէտը և հայելին ռեպերտուարն է։

Հայ թատրոնը հէնց ծնված օրից տեսաւ «Համլէտ», «Օտէլլօ», «Արքայ Լիր», «Մէդէա», «Սաֆօ», որոնց հետ միախառնվում են ֆրանսիական մելոդրամները։ Այդ աննորմալ դրութեան բուն պատճառը պէտք է որոնել միայն մեծ դերասանների ոչ ժամանակին երևան գալու մէջ։ Ծնված Համլէտ-Ադամեանը պէտք է որ Համլէտ խաղար, որքան էլ այդ բարդ հոգեբանական տիպի արտայայտութիւնները խորթ և նոյն իսկ անհասկանալի թւային մեր անպատրաստ թատրոնական հասարակութեանը։ Ադամեանի հարուստ կլասիկ ռեպերտուարից յետոյ մեր թատրոնական գրականութիւնը անցնում է մասամբ մելոդրամների և գլխաւորապէս ինքնուրոյն պատմականի։ Այս ուղին, նոր գործի զարգացման այս տեսակէտը կարելի է համարել աւելի նորմալ, և դա միանգամայն արդիւնաւէտ վաստակ կը յանգէր, եթէ մեր պատմական պիեսների հեղինակները փոքր ի շատէ ծանօթ լինէին բեմական արուեստի հետ և գեղարուեստի բարձր պահանջները չը շահագործէին։ Կարծես թէ նրանք առաջնորդվել են ազգային-կրօնական տենդենցիայով և կամեցել են բեմը վերածել քարոզի մի վայրի։

Նրանք աղաւաղելով մարդկային հոգեբանական աշխարհը՝ մեր պատմական հերոսներին վերածել են ինչ-որ մանեկէնների, խրտուիլակների։ Նրանք խօսում են, բայց չեն ապրում... Նրանց ճառերը, նրանց կացութիւնը բոլորովին կեղծ են... Փայտէ նկարներ են նրանք, որ զոհվում են ինչ-որ գաղափարների համար, առանց հոգեկան ապրումների։

Նման ռեպերտուարից մեր դերասանները ժառանգել են գեղեցիկ հարստութիւն—գոռում-գոչում։ Եւ ահա այսօր այժմեան հասարակութիւնը փախչելով փախչում է մեր պատմական պիէսներից։ Սակայն ի հարկէ անհեթեթութիւն կը լինի ասել, որ պատմական պիեսները ոչինչ չեն տալիս, որովհետև դրա դիմաց տեսնում ենք, թէ ինչպէս են լցնում թատրոնասրահը Իւժինի Սումբատովի «Դաւաճանութիւն» լեգենդա-պատմական պիէսը տեսնելու համար։ Եթէ Իւժինը իր այդ լեգենդա-պատմական պիէսով կաշկանդում է ոչ միայն մեր, այլ և ռուս հասարակութեան ուշադրութիւնը, ապա մինչ մենք փախուստ կը տայինք մեզ հարազատ «Արշակ Բ.»-ի իսկական տիպը տեսնելուց նրա բազմախառն հոգեբանական ճշգրիտ արտայայտութիւններով. ոչ, երբէք. Իւժինի «Դաւաճանութեան» մէջ մենք ուժեղ կերպով տեսնում ենք մի ամբողջ ազգի իրականութեան հարազատ տառապանքները։ Գեղարուեստագէտին յատուկ ճաշակով լեգենդան դադարում է լեգենդա լինելուց, և մեր առաջ պատկերանում են մահմեդական բռնակալի և ճնշված քրիստոնեաների ապրումները ամենաբարձր գեղարուեստական շրջանակների մէջ պարփակված, վրաց ազգի լոյսն ու ողբը իր հոգեբանական նուրբ ու ճիշդ արտայայտութիւններով։ Սակայն մինչ հայ ազգը, որ իր աշխարհ գալու օրից դաժան կեանքի ողբերգական մասի հարազատ զաւակն է հանդիսացել, որի հայրենիքը եղել է բոլոր աշխարհակալ տիրապետողների կռուի ճամբան, չունի անցեալ ապրումների հարուստ էջեր... Ինչու չէ, ծով ապրումներ, միայն բացակայել է վարպետի գրիչը։ Չէ որ այդ ապրումների, Հայաստանի այդ ողբի ձայնն անգամ հասել է ֆրանսիական մեծ դրամատուրգ Կոռնէյլին, շարժել է նրա նուրբ սրտի լարերին և արտադրել մի գեղեցիկ ողբերգութիւն հայ իշխանի կեանքից, որ և մինչ այժմ խաղացվում է մեծ աջողութեամբ Պարիզի «Comédie Française» թատրոնում։ Ուրեմն մեր հասարակութեան փախուստի դրդապատճառը պէտք է որոնենք հոգեբանական հակասութիւններով ու կեղծութիւններով լի մեր պատմական պիէսների կառուցւածքի մէջ։

Ինչ վերաբերում է մելոդրամ ռեպերտուարին, դա առաջին աստիճան պիտի համարել թատրոնական հասարակութիւն պատրաստելու համար, ուր իրար յաջորդող պատկերները կառուցված լինելով պատահարների վրա՝ լաւն ու բարին շարունակ յաղթող են հանդիսանում և այդպիսով մանուկ հասարակութիւնը խանդավառութեան հասցնում։

Մելոդրամ և մեր շինծու պատմական պիէսների կողքին յանկարծ երևան է գալիս Սունդուկեանը՝ ռէալ գրողը, հեռու մանեկէն տիպերից, հեռու մելոդրամներին յատուկ հանդիպումներից։

Սունդուկեանը մեծ տաղանդին վայել համարձակութեամբ հնչեցնում է իր տաւիղի մաքուր հնչիւնները... արհամարհված կինտոյի արդար բողոքի ձայնը ամենքին լսելի է դարձնում, բացում Թիֆլիսեցոց ընտանեկան կեանքի արատաւոր կողմերը, յայտարարում կռիւ հին և նոր սերնդի միջև... և այդ բոլորը անում է նա գեղարուեստօրէն. Սունդուկեանը հնչեցրեց թատրոնական գրականութեան առաջադիմութեան փողը... և նա՝ Սունդուկեանը էլ աւելի անմոռաց, էլ աւելի ամենքի սրտին մօտ կը լինէր և հմայքը ամենքի համար էլ աւելի ուժեղ, եթէ իր անմահ տիպերը չը կապէր Թիֆլիսեցոց նեղ շրջանի՝ նրանց նիստ ու կացի, նրանց լեզուի հետ։

Սակայն ի՞նչ կարող ենք անել. քանի որ Սունդուկեանի կոչումը այդ միջավայրի համար է եղել, նրա բնածին կեանքը է սառնում այդ տիպերի շուրջը։ Գուցէ և ինքը Սունդուկեանը վերջերը զգացել է այդ սահմանափակումը, և այդ պատճառով էլ փորձեր է արել սաւառնելու աւելի բարձր, բայց թէ այդ անսահման մթնոլորտում նրա վրձինը գզգզվում է սաւառնելուց, նրա տաղանդը սկսում է կեղծ հնչիւններ արձակել և... և դադարում է մեծ Սունդուկեան լինելուց։ Համարեա նոյնը կարելի է ասել և մեր մեծ երգիծաբան Պարոնեանի գրութիւնների մասին։ Սրանցից յետոյ սկսում են տեղալ վաղազան յայտնի ու անյայտ կէս մելոդրամ, կէս ռէալ, կէս կլասիկ պիէսները, առաջացնելով սոսկալի խառնաշփոթութիւն. և ցաւալին այն է, որ համարեա մեր բոլոր հեղինակները շարունակ իրանց պիէսների հերոս են ընտրել վաչխառուներին... Մինչ հայկական ապրումները սոսկ վաչխառուների շուրջն են պտտում։ Սոսկալի միակողմանի ռեպերտուար, որոնց հետ հարկաւ չի կարելի խառնել Թառայեանի պիէսները, որոնք մեծ մասամբ կենսագրական բնոյթ են կրում, զուրկ բեմական տեխնիկայից և ոչինչ չենք կորցնի, եթէ այդ պիէսները ոչ թէ ներկայացվեն, այլ կարդացվեն որպէս դասախօսութիւններ։ Առ հասարակ մեր հեղինակները ծանօթ չեն բեմական արուեստին. դրանց միջից Շիրվանզադէին կարող ենք մասնանշել, որպէս միակը, որը գիտէ թէ դժուար կացութիւնից ինչպէս անցնել հետաքրքրականին։

Շիրվանզադէն կարող է համարվել մեր մէջ այն դրամատուրգներից, որոնք տենչում են դէպի բարձրը, դէպի գեղարուեստական վեհ պահանջները, եթէ հաշւի չառնենք նրա «Նամուս» և «Չար ոգի» պիէսների վերջաբանութիւնները, որոնք միանգամայն հակագեղարուեստական են։ Դա եա մի սխալմունք է, որ պէտք է վերանայ հայկական ռեպերտուարի միջից։ Թատրոնի նպատակը այն չէ, որ կեանքի ռէալ պատկերները հանդէս բերվեն կոպտաբար։ Գեղարուեստական աշխարհում ռէալ կեանքի ամենասոսկալի պատկերները պէտք է հանդէս բերվեն այնպիսի շրջանակների մէջ, որոնք առաջ բերեն բողոք, այդ խայտառակ չարիքներից ազատվելու բարի ցանկութիւններ, բայց ոչ երբէք զզուանք կամ ջղերի քայքայում։ Իսկ վերաբերում է «Պատւի համար» պիէսին, դա կարելի է համարել գլուխ գործոց, թէև ցանկալի է, որպէս նոր-դրամայի հիմնաւոր սկզբունք՝ ոչ թէ կուլի կէս ճանապարհին մեր երիտասարդ սերունդը ընկնի յուսահատութեան գիրկը և վերջ դնի իր կեանքին ինքնասպանութեամբ, որ հին դրամայի հատկերի նշան են, այլ ազատելով իր բոլոր կապանքները սեղմող հնութիւնից՝ գնայ, ինչպէս Զուդերմանի նոր սերունդը, անկախ հներից «նոր պատիւ», «նոր կեանք» վերստեղծելու։ Գործել, ապրել և շարունակ տենչալ—դրա մէջն է նորագոյն մարդկութեան բուն իղձը. այդպէս են ապրում վսեմ հերոսները Իբսենի, Հաուպտմանի, Մետերլինկի... Թող մարդկային հանճարը գնայ իր օրէնքների ետևից, կռուի և բնութեան դէմ՝ մինչև որ մի անյաղթ ուժը դնէ իր կնիքը...

Այդպէս է մտածում և մեր Շանթը, որի արեղան նետվում է կեանքի ծովը... այն ծովը, որի գրկից կամենում էին յափշտակել անբնական միջոցներով և լեռն կասեցնել այն ապրումներից, որ հարազատ է դեռ մարդկային ոգուն։

Այս ամենից յետոյ գալիս ենք այն եզրակացութեան, որ մեր ռեպերտուարը չէ ծառայել իր բուն նպատակին, նա եա պրկված է եղել նեղ շրջանակների հետ և միայն 50 տարին բոլորելուց յետոյ տենչում է սլանալ դէպի գեղարուեստի բուն պահանջները։ Ուրախալի երևոյթ. չէ որ հայ ազգն էլ կազմելով մի փոքրիկ մասնիկ համայն մարդկութեան չէ կարող և չը պէտք է միայն նեղ շրջանակների մէջ...

Այսօր հայ ազգը ունի առաջադիմութեան ծով տենչեր և այդ տենչերը հարազատ են մարդկութեան յաւիտենական ձգտումների իրագործման։ Եւ քանի որ գեղարուեստի նպատակը մէկ է, ապա ուրեմն զարգացնելով մեր ինքնուրոյն ռեպերտուարը՝ իրաւունք չունենք փախուստ տալու համաեւրոպական հեղինակների արտադրութիւններից։

Եթէ այսօր եւրոպական գրողների պիէսները մեզ տաղտկալի են թւացել, դրա պատճառը պէտք է որոնել մեր նեղ շրջանակների գործելակերպի, մեր առանձնակեցութեան, մեր միակողմանի զարգացման մէջ։ Այո, քնած է մեզ մօտ Իբսէնը, քնած է Հաուպտմանը և ուրիշ նման նոր գրողներից շատ շատերը, որովհետև մեր բեմի վրա չը կայ կեանք, որովհետև մեր պատրաստականութիւնը այդ ուժեղ սուր մտքի թռիչքների հանդէպ նսեմանում է և մեզ համար ստեղծվում է կեղծ դրութիւն։ Բայց չէ որ բեմական գեղեցիկ արուեստը մեռնում է այնտեղ, ուր երևան է գալիս կեղծիքը։ Քանի դեռ ուշ չէ, աշխատենք ուժեղ թափով ստուարացնել մեր թէ ինքնուրոյն և թէ թարգմանական ռեպերտուարը գեղարուեստի պահանջներին համապատասխան նորագոյն պիէսներով և միևնոյն ժամանակ մոռացութեան չը մատնենք մեր անցեալ կեանքի պատմական մասը. չէ որ մինչև օրս այդ շրջանից ոչինչ կենսական բան չենք տեսել։

Թատրոնը չէ կարող զերծ մնալ անցեալի յուշերից... մեր նախորդների տենչերի ու ապրումների այն ուղիից, որի վրա դարեր շարունակ թափել է արիւն՝ իր գոյութիւնը, իր ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։

Եւ ահա այսօր հայ ազգը եկել հասել է այն կէտին, որ կարողացել է կառուցել իր փոքրիկ բոյնը մարդկութեան առաջադիմութեան մեծ ճանապարհի վրա. և մի՞թէ գեղարուեստը կարող է անտես անել տանջված ժողովրդի արեամբ լուացած այդ ոլոր ու մոլոր ուղին... Երբէք։

Այժմ անցնենք քննադատութեան, մամուլին, որ և պէտք է համարել մեր գործի վերջին ապաւէնը։

Ամօ-Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Քաղաքային վարչութիւնը Հիւսիսային Կովկասում պատուիրել է 100 վագոն ալիւր, որը իշխանութիւնների խոստացած աջակցութեամբ ուղարկվելու է երեք գնացքով նոյեմ. 14-ին, 19-ին և 24 ին։

◆ Նահանգապետը յայտնել է քաղաքագլխին, որ ինքը դէմ չէ քաղաքային դումայի որոշման՝ 150,000 ր. փոխառութիւն կնքելուն, որպէսզի փոխառութիւնը գնալու է «կրաժօկի» շէնքի կառուցման վրա։

◆ Մենք հաղորդել էինք, որ գեներալ-մայոր Վ. Մ. Թամամշեան նշանակվել է Կովկասի փախստականների գործի գլխաւոր լիազօր. այժմ, ինչպէս լսում ենք, գեներալ Թամամշեանին օգնականներ են նշանակված մի քանի օֆիցեր, դրանց թւում և դումայի իրաւասու Լ. Սանգուլեան։

◆ Նահանգապետի ստացած տեղեկութիւններից երևում է, որ Ռոստովից Անդրկովկաս ուղարկվող անհրաժեշտ մթերքների առաքումը սահմանափակվել է։ Ներկայումս անհնար է համարվում վագոններ բեռնելը, որովհետև բեռնաւորվածները տակաւին գտնվում են ճանապարհին, Վլադիկավկազի գծերի վրա։ Այդ պատճառով նահանգապետը կարգադրել է, որ անհրաժեշտ մթերքների բեռները շուտով ստանան վաճառականները, որպէսզի ապրանքները կանոնաւոր ստացվեն։

◆ Մոսկվայի Հայկական Կոմիտէտը Սալմաստ է ուղարկում բժշկա-սննդական մի մեծ խումբ։

◆ Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհրդի հրաւէրով մայրաքաղաքից եկած Վ. Վ. Վօդովօզովը նոյեմ. 19-ին Ժողովարանում կարդալու է դասախօսութիւն «Քաղաքական պատմութիւնը Թիւրքիայում» թեմայով։

◆ Նոյեմ. 14-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ ապրանքները. ալիւր 30 վագոն, ցորեն 1 վ., շաքար 3 վ., գետնախնձոր 8 վ., աղ 3 վ., գարի 7 վ., նաւթ 1 վ., միրգ 1 վ., սպիրտ 1 վ., եգիպտացորեն 1 վ. և սեխ 1 վագոն։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականների կողմից ընտրվել են երկու պատուիրակ՝ Ջելոկաեվ և Մաչաբելի, որոնք պէտք է մասնակցեն նոյեմ. 23-ին Պետրոգրադում կայանալիք Պետ. Խորհրդի համար 6 անդամների ընտրութեանը։

◆ Հայոց Գիւղատնտեսական Ընկ. Ալեքսանդրոպոլի, Լոռու և Նոր-Բայազէտի շրջաններում բաց է արել երկրագործական գործիքներ վաճառելու կայաններ, որտեղից այդ գործիքները նա շատ մատչելի գներով վաճառելու է գիւղացիներին։ Նոր-Բայազէտում բաց է արել նաև գիւղատնտեսական դասընթացներ գիւղացիների համար։

◆ Դատաստանական պալատը արդարացրեց «Закавк. Рѣчь»-ի նախկին խմբագիր Դումբաձէին, որը մեղադրվում էր նրանում, որ պոլիտեխնիկումի հարցի առիթով իր ժամանակին իր թերթում գրել էր, թէ պոլիտեխնիկումի հարցի լուծումը, այն է՝ նրա շէնքի կառուցումը Նաւթլուղում,—հետևանք է անգիտակից վճռի։ Վերջին խօսքերը իբր թէ վերաբերել են նախկին փոխարքային, որի համար էլ շրջանային դատարանը նրան ենթարկել էր 300 ր. տուգանքի։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Մայրաքաղաքի լրագիրները յայտնում են, որ Կովկասում սպասվում են խոշոր բարենորոգումներ փոխարքայութեան մէջ, համաձայն այն ծրագրի, որ գոյութիւն ունէր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի փոխարքայութեան օրով։ Նախագծված է դիւանագիտական բաժին Փոխարքայի դիւանատանը կից և նոր պաշտօններ լեռնային ցեղերի կառավարութեան մէջ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Այս տարի լրանում է Վրաց Ժողովրդի մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան գործունէութեան 35 տարին։ Այդ պատճառով առաջիկայ նոյեմբ. 21-ին կայանալիք ընդհանուր ժողովը քննութեան է առնելու Ընկերութեան 35-ամեայ յոբելեանը կատարելու խնդիրը։

◆ Վրաց Գիւղատն. Ընկ. քարտուղար Վ. Ռցխիլաձէի տուած զեկուցումից պարզվել է, որ գինու բերքը այս տարի սովորական բերքի 5%-ից աւելին չէ կազմում և ստացվածն էլ ստորին յատկութիւն ունի։

◆ Հոկտեմբերի 21 ին և 22 ին Օզուրգէթիում տեղի ունեցաւ Գուրիայի և Փոթիի կօօպերատօրների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը սովի ենթարկված գիւղերին հաց և սերմացու մատակարարելու մասին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Վանի թագաւորութիւնը», գործ Լէօյի

Բանիմաց և քննասէր անձը Լէօյի վերոյիշեալ գործն ուշադրութեամբ կարդալով միմիայն մի եզրակացութեան կարող է գալ, այն է՝ «ենթադրութիւն ենթադրութեանց, ամէն ինչ ենթադրութիւն է»։ Լէօն իր գործի այս գլխում խօսում է միմիայն այսպէս կոչված խալդերի կամ ուրարտացիների թագաւորութեան մասին *)։ Այս ժողովրդի թագաւորութեան մասին խօսողները միայն և միմիայն ասորական և վանեան սեպաձև արձանագրութիւններն են։ Ասորական սեպաձև արձանագրութիւնները, ինչպէս պնդում են շատ գիտնականներ, արդէն կարդացվել են և բաւականին նիւթ են մատակարարում խալդերի կամ ուրարտացիների թագաւորութեան պատմութեանը։ Իսկ վանեան արձանագրութիւնները, որոնք մեծ քանակութեամբ գտնվել են թէ Վանում և իր շրջակայքում և թէ Հայաստանի ուրիշ կողմերում, նոյնպէս կարդացվել են, սակայն ենթադրաբար։ Ասորական արձանագրութիւնների վերծանումը հասկանալի է, որովհետև ասորական լեզուն յայտնի է գիտութեանը։ Սակայն վանեան արձանագրութիւնների վերծանումը հանդիպել և հանդիպում է դրեթէ անպարտելի դժուարութիւնների, որովհետև այն լեզուն, որով այդ արձանագրութիւնները փորագրված են, անհետ կորել է։ Այդ լեզուն, որքան յայտնագործվել է արձանագրութիւններից, ոչ մի նմանութիւն չունի հայ լեզուի հետ։ Առաջ կարծում էին, որ դա նմանութիւն ունի սեմիտական լեզուների հետ։ Սակայն այժմ այդ կարծիքն եա թողնված է, և այս ասպարէզում գործող ամենանորագոյն և ամենահմուտ գիտնականը, պրօֆ. Լէման-Հաուպտը, որի գործերը Լէօն եա իր աշխատութեան մէջ պատկառանքով յիշում է, յայտնում է, որ վանեան արձանագրութիւնների լեզուի ծագումը մնում է միանգամայն անորոշ և որ այդ լեզուն միայն հեռաւոր նմանութիւն կարող է ունենալ ուրալ-ալտայեան լեզուների հետ, այն էլ ենթադրաբար (Lehman Haupt, Armenien, I, § 7)։ Եւ որովհետև մի ազգի ծագումն որոշվում է նրա լեզուի ծագումով, խալդերի կամ ուրարտացիների ծագումը է և կը մնայ անորոշ, քանի որ նրանց լեզուի ծագումն անորոշ է։ Ինչպէս նրանց լեզուն հայերէն լեզուի հետ, այնպէս էլ նրանք, խալդերը կամ ուրարտացիները, մեզ հայերիս հետ ոչ մի ազգակցութիւն չունեն։

Ովքե՞ր էին խալդերը կամ ուրարտացիները, որոնք Վանի շրջանում և Վանում ապրեցին, ստեղծեցին, ինչպէս կարծում են, բարձր քաղաքակրթութիւն և ապա ընդմիշտ անյայտացան պատմութեան ասպարէզից, թողնելով Վանում և ուրիշ տեղերում իրանց մասին անմեռ յուշարձաններ, տակաւին պարզված չէ։ Նոյնպէս պարզված չէ, թէ ե՞րբ անյայտացան խալդերը կամ ուրարտացիները և ե՞րբ հաստատվեցին այժմեան հայերը, որոնց արիական ծագումն անկասկածելի է, նրանց տեղ Հայաստանում։ Լէման-Հաուպտն իր նշանաւոր գործում, որը վերև յիշեցինք, ասում է. «Խալդերի վերջին թագաւորների անձնաւորութիւնն և ժամանակագրութիւնը, ուրեմն և նրանց թագաւորութեան վախճանը, տակաւին կարօտ են լուսաբանութեան... Լիւդական-միդական կռիւները Ուրարտու երկրի համար և հայերի մօտաւորապէս նոյն ժամանակները տեղի ունեցած ներգաղթը (Հայաստան) կարօտ էին և տակաւին այսօր եա կարօտ են պարզաբանութեան»։ (Armenien S 14).

Ահա թէ ինչու սաղմային վիճակի մէջ է գտնվում խալդագիտութիւնը։ Այս վիճակի մէջ թէ օտարազգի և թէ մերազգի գիտնականներից բազմաթիւ փորձեր են արված խալդերի թողած արձանագրութիւնները կարդալու։ Թէ ինչ կռուանների վրա են հիմնվել այս փորձերը, այդ Լէօն իր գործում (եր. 69—71) առաջ է բերել։ Նոյնն առաջ էր բերել Ե. Դաղբաշեան իր գործի մէջ (տես Ե. Դաղբաշեան, «Ստոյգ հայոց պատմութիւն», երես 12—15)։ Սակայն այս կռուաններն այնքան հաստատ չեն, որ կարելի լինէր նրանց վրա հիմնվելով յայտնել խալդերի պատմութեան անկասկածելիութիւնը։ Եւ եթէ մենք ուշի-ուշով հետևենք Լէօի պատմութեանը, որի մէջ նա հիմնվելով արձանագրութիւնների վրա՝ այնքան մեծ ազատութեամբ տալիս է խալդերի կամ ուրարտացիների պատմութիւնը բազմակողմանի լուսաբանութիւններով, տարբեր եզրակացութեան չենք կարող գալ։ Նախ Վիեննայի «գիտնական» վարդապետները յայտարարում են, որ վանեան արձանագրութիւնները գրված են հայերէն լեզուով։ Գերմանացի արևելագէտ Մորդմանն էլ կարդում է իբրև յայտնի վանեան արձանագրութիւններն և լուսաբանում այն երանելի հաւատով, որ դրանք գրված են հայերէն լեզուով։

Դուրս է գալիս, որ երևելի գերմանացի արևելագէտը մոլորութեան մէջ է եղել, որ նա նոյնիսկ մի վանեան արձանագրութիւն, գրված ասորերէն լեզուով, համարել է հայերէն գրված (Լէօ, «Վանի Թագ.», եր. 64—65)։ Ապա Ռաուլինսոնը յայտարարում է, թէ «ուրարտացիները ոչինչ նմանութիւն չեն ունեցել հայերին և թէ վանեան արձանագրութիւնների լեզուն ոչ մի ազգակցութիւն չունի հայերէնի հետ», ապա Լը-Նորմանն է յայտնում այն միտքը, թէ «վանեան արձանագրութիւնների լեզուն աւելի մօտիկ է վրացերէնին» (անդ. եր. 65—66)։

Պրօֆ. Քերովբէ Պատկանեանը յայտնում է, որ արձանագրութիւնները գրողները հայերն են եղել, բայց նրանց այն ժամանակվայ գործածական լեզուն կորել է (անդ. եր. 67)։ Իսկ 1900 թ. Վիեննայի «գիտնական» վարդապետ Սանդալճեանը տպում է ֆրանսերէն լեզուով մի հաստափոր գիրք, խալդական բառարանով հանդերձ, որի մէջ հիանալի կերպով կարդում և թարգմանում է բոլոր վանեան արձանագրութիւններն և յայտարարում, որ դրանք հայերէն են գրված։ Իր այս գործը համարձակ վարդապետը ներկայացնում է ֆրանսիական գիտութիւնների ակադեմիային։ Բայց, աւաղ, գիտութիւնների ակադեմիան վարդապետի այս գործը մի կողմ է դնում, առանց որևէ գիտական արժէք գտնելու նրա մէջ (անդ. եր. 71—72)։ Զարմանալի է, որ Լէօն այս բոլորը պատմելով՝ հայր Սանդալճեանի գործին գիտական արժէք է տալիս և նրա մատուցած թարգմանութիւններն առաջ է բերում իբրև զուտ պատմական նիւթեր (օր. անդ. եր. 263—264)։ Ներելի լինի մեզ ասել, որ այստեղ Լէօյի մէջ խօսել է ոչ թէ անաչառ պատմաբանը, այլ հայրենասէրը, ըստ գերմանական ասածի, թէ «Was man wünscht, glaubt man gernt» (իր ցանկացածին մարդ սիրով հաւատում է)։

Սանդալճեան վարդապետը միակը չէ, որ սեպաձև արձանագրութիւնների նկատմամբ անակնկալ է ներկայացրել գիտութեանը։ Նման անակնկալ ներկայացրեց նաև գերմանացի գիտնական Եննսէնը, որին Լէօն եա իր գործում (եր. 110, նկատ.) յիշում է։ Ինչպէս յայտնի է, հիտիտները կամ քեթացիները եա թողել են Փոքր և Առաջաւոր Ասիայի կողմերում բազմաթիւ արձանագրութիւններ իրանց մասին, որոնք մնացել են առեղծուած։

Բայց ահա վերոյիշեալ Եննսէնը գրել է մի խոշոր ուսումնասիրութիւն «Hittiter und Armenier» խորագրով, որի մէջ նա մանրամասնաբար կարդում է այդ առեղծուածային արձանագրութիւնները հայերէնի օգնութեամբ և յայտնում, որ հիտիտները հայեր են եղել, իսկ նրանց լեզուն՝ հայերէնը։ Սակայն Եննսէնի այս ուսումնասիրութիւնը գիտութեան կողմից ոչ մի ընդունելութիւն չը գտաւ։ Եւ մերազգիներից պ. Բասմաջեանն եա ծաղրում է այդ ուսումնասիրութիւնը (տես նրա «Իսկական պատմութիւն հայոց» եր. 44)։

Վանեան արձանագրութիւններին բաղդակից են էտրուսկեցիների թողած արձանագրութիւնները։ Էտրուսկեցիները հաստատվելով Իտալիայում՝ երկար պատերազմ մղեցին հռոմայեցիների հետ, նրանցից նուաճվեցին 280 թ. Քրիստ. առաջ, իսկ իրանց մայրենի լեզուն բոլորովին կորցրին Քր. մօտ 3 դար յետոյ։ Չը նայելով որ հռոմէական դասական մատենագիրները սրանց մասին շատ հարուստ տեղեկութիւններ են թողել, այնուամենայնիւ նրանց թողած անթիւ արձանագրութիւնները, որոնք գրված են էտրուսկերէն, դեռ կարդացված չեն։ «Անոնց լեզուն,—գրում է պ. Բասմաջեանը (եր. 46—47),—կարելի չէ եղած հասկնալ, որովհետև լեզուն կորսուած է և ոևէ ծանօթ լեզուի միջոցով լուծելն ան-

---

*) Ձայնի վերատառութիւնը՝ «Վանի թագաւորութիւնը» կարող է ընթերցողին կարծել տալ, թէ գրքում խօսք կայ Արծրունիների թագաւորութեան մասին եա, որը սկիզբն առաւ Վանում X դարի սկիզբներում և վերջացաւ XI դարի սկիզբներում։

կարելի դարձած։ Հետաքրքրական կէտն այն է, որ արձանագրութիւնները կարելի է կարդալ, բայց կարդալ միայն, առանց իմաստն հասկնալու, մինչդեռ քեզանից առաջ արձանագրութիւնները կարդալն ալ չէ յաջողուած ինձ»։ Սակայն այստեղ նա գիտութիւնը անակնկալ է մատուցվել. Բացգէ գիտնականն այս արձանագրութիւնները «կարդացել» և գտել է, որ նրանց լեզուն հայերէն է. . .

Եւ ուշի-ուշով վանեան արձանագրութիւնների ընթերցանութեան մասին եղած փորձերն ուսումնասիրողը կարող է միայն այն եզրակացութեան գալ, որ այդ փորձերը լոկ փորձեր են, հիմնված ենթադրութիւնների վրա (տես Ց. Դաղբաշեանի «Սոսյգ հայոց պատմութիւն», եր. 19—21)։ Մեր կարծիքով, չի կարելի այս խախուտ հիմքերի վրա կառուցանել մի այնպիսի հոյակապ պատմական շէնք, օրպիսին կառուցել է Լէօն։ Սա բաւական չէ, որ խալդերի Թագաւորների պատմութիւնն ընդարձակօրէն առաջ է բերում, այլև հիմնվելով արձանագրութիւնների յաճախ էական ընթերցումների վրա՝ բազմաթիւ եզրակացութիւններ է հանում խալդերի կեանքի զանազան երեւյթների մասին, անում է բազմաթիւ ստուգաբանական ենթադրութիւններ և այլն։

Այժմ մի երկու խօսք Լէօյի պատմագրութեան եղանակի և ոճի մասին։ Լէօն սիրում է յաճախ շեղվել բուն առարկայից և ընդարձակ ճառել ուրիշ առարկաների մասին, որոնք գլխաւոր առարկայի հետ կապ ունեն։ Այսպէս նա վանական արձանագրութիւնների մասին խօսելուց առաջ ընդարձակօրէն խօսում է պարսիկ և ասորական արձանագրութիւնների մասին (եր. 15—30)։ Եր. 22 գրում է. «Սուրաթ քաղաքի շրջականերում ապրող գեաբրների մօտ նա գտաւ Զենդ-Աւեստան», առանց այլևս բացատրելու, թէ ինչ բան է Զենդ-Աւեստան, մինչդեռ այդ բացատրելը կարեւոր էր։ Նոյնպէս Լէօն պէտք է նկարագրէր գոնէ ընդհանուր գծերով սեպագիր արձանագրութիւնների ընթերցանութեան եղանակը, քանի որ այդ խնդրի մասին նա այնքա՜ն ընդարձակ ճառում է։ Եր. 103 գրում է «կէս-անկախութիւններ». աւելի լաւ չէ՞ր լինի գրել կիսանկախ, կիսանկախութիւն։ Եր. 159 գործ է ածում «տակնուվրայութիւններ» բառը Umwaelzungen, потрясенія բառերի իմաստով. աւելի լաւ չէ՞ր լինի ցնցումներ, ցնցումներ բառերը գործածելը։ Եր. 233 каналь եւրոպական բառի համար՝ գործ է ածում և ջրանցք և ջրմուղ բառերը, մինչդեռ լաւ կը լինէր, եթէ ջրանցք բառը գործածված լինէր, քանի որ ջրմուղ բառը գործ է ածվում водопроводъ, Wasserleitung բառի իմաստով։

Լէօն իր գործն սկսել է հետևեալ համառօտ նախաբանով. «1915 թ. մայիսի 6-ին ռուսաց զօրքը գրաւեց Վան քաղաքը։ Պատմական այս խօշոր դէպքին և նրա հերոսներին եմ ես ձօնում այս գիրքը...»։ Այժմ Վանում, ինչպէս և, աւա՜ղ, Հայաստանի միւս մասերում, հայութիւնը ջնջված է... Հայ ցեղը, որ դարերով ապրեց այդ երկրում, իր քրտինքով և արիւնով ողողեց այդ երկրի ամեն մի քարը, այժմ արիւնարբու բարբարոսի ձեռքով ջնջված է և այդ անմահ երկիրն երևի մի այլ բաղդաւոր ցեղի հայրենիք կը դառնայ...

Դ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Բատայլի «Обнаженная» պիէսի բովանդակութեան նիւթը սովորական սիրային պատմութիւններից մէկն է. Նկարիչ Պիէրը անկեղծօրէն սիրում է իր նատուրշչիցա Լուիզային, որ փոխադարձաբար նուիրված է Պիէրին և նրա հետ բաժանում է աղքատ աշխատաւոր կեանքի զրկանքները։ Սակայն այդ երջանիկ դրութիւնը երկար չէ տեւում։ Պիէրը հարստութիւն ու անուն է վաստակում և նա այլ ևս չէ բաւականանում Լուիզայով։ Նա կապ է հաստատում գեղեցկուհի իշխանուհի դը-Շաբրոնի հետ, բարձի-թողի անելով իր առաջին սիրոյ էակին՝ Լուիզային, որ իր մրցակցի դէմ պայքարելուց յետոյ՝ ատրճանակ է պարպում իր վրա, բայց չէ մեռնում և, առողջանալով և համոզվելով վերջնականապէս՝ որ Պիէրը չէ սիրում իրան, հեռանում է «բուժելու իր սրտի վէրքը» իր նախկին սիրահար Րաշարի մօտ։ Հեղինակը այնպէս է դուրս բերում, որ այդ Րաշարը հանդէս է գալիս հէնց ժամանակին, որպէսզի բարձրացնէ այն, ինչ ձգեց Պիէրը ճանապարհի վրա։

Պիէսի երրորդ գործողութիւնը դրամատիկական է և թողնում է ուժեղ տպաւորութիւն։

Գեղարուեստական տեսակէտից պիէսի արժէքն այնքան էլ մեծ չէ։

Այս պիէսի ներկայացումն անցաւ հարթ նոյեմ. 13-ին Արտիստական Ընկ. թատրոնում։

«Տարտօ» խումբը բեմ է հանում նոր պիէսներ։ Հասարակութիւնը յաճախում է մեծ համակրութեամբ։

Րեց.

Ասիական օպերէտ

Վերջին անգամ Թիֆլիսի Ժողովարանի անդամների խնդրանօք հայ օպերէտային դերասանական ընկերակցութիւնը նոյեմ. 13-ին ներկայացրեց Հաջիբէկովի «Արշին մալ ալանը»՝ պ. Կարապետեանի դիրիժօրութեամբ։

Արդէն ծանօթ դերակատարներից այդ պիէսում հանդէս եկան՝ Բաղդասարեան (Ասկեար), Թարոսեան (Սուլթան-բէկ), Ալլահվերդեան (Սուլէյման), օր. Աստղիկ (Ասիա), տ. Սաթենիկ (Գիւլչօհրա), տ. Վարդիթեր (Թէլլի), որոնց բոլորի մասին մենք արտայայտվել ենք իր ժամանակին։

Նոր էին միայն Խալայի դերում տ. Սոֆիկը, որ չը գոհացրեց իր խաղով, և ծառայի դերում՝ պ. Ղազարեանը, որի բնածին երգիծաբան շնորհքը արդէն յայտնի է նրա խաղը տեսնողներին. սակայն այդ երեկոյ նա իր խաղին տուել էր carte blanche, որով կորցնելով իր ծիծաղաշարժ դերի չափը՝ նա գործեց մասամբ շարժի տպաւորութիւն։

Ընդհանուր խաղը այս անգամ այնքան էլ հարթ չէր. օրկէստրը չէր պահպանում տեղ-տեղ համապատասխան տեմպ և նրա ու դերակատարների միջև նկատվում էր անհամաչափութիւն։ Ցամենայն դէպս ներկայացումը ժամանցելի եղաւ այն ահագին բազմութեան համար, որ ծայրէ ի ծայր լցրել էր այդ երեկոյ Ժողովարանի դահլիճը։

Չենք կարող սակայն չը մատնանշել այն անօրմալ երեւյթը, որ Ժողովարանի վարչութիւնը վաճառում է նորմայից դուրս աւելի տոմսակներ, որից դահլիճում ներկայացման ժամանակ տիրում էր բաբելոնեան խառնակութիւն...

Մեր առաջարկութիւնը իրականանում է։ Մօտիկ ապագայում նորակազմ հայ դրամա-օպերային դերասանական ընկերութիւնը պարբերաբար տալու է հայկական ուրախ օպերաներ թէ Թիֆլիսում և թէ ուրիշ քաղաքներում։

Րեցէնզէնտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ արդուինցիներին

Բաթում, 2 նոյեմ.

Հինգ ամիս է, ինչ Արդուինը վերագրաւված է։ Այդքան ժամանակի ընթացքում դեռ կէսը չէ վերադարձել փախստական արդուինցիներից։ Կարծում ենք, որ ժամանակն է վերադառնալու և նորից շէնցնելու կիսակործան հայրենիքը։ Չէ՞ որ ձմեռը մօտենում է և Ռուսաստանի սահմաններին չէք կարող ապրել։

Պէտք է վերադառնալ և հետեւեալ պատճառից դրդված. Ռուսաստանում կամ այլ տեղերում ընդհանրապէս ապրում էք ի հաշիւ զանազան բարեգործական ընկերութիւնների. բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ ահագին խմբով փախստականներ են եկել Թիւրքաց Հայաստանից և նրանք շատ աւելի ծանր դրութեան մէջ են, քան դուք էիք։ Ազատեցէք բարեգործական ընկերութիւնները ձեզանից, որ նրանք կարենան օգնել ձեր փոխարէն՝ շատ աւելի դժբաղդներին։

Դրանով դուք նախ կը շէնցնէք ձեր հայրենիքը՝ Արդուինը, երկրորդ՝ կատարած կը լինէք ձեր բարոյական պարտականութիւնը։

Տայեցի

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—171

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
174. 0—58 (Ֆ. Կ.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների ցուցմամբ՝ սրսկումներ, մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ. հիմնաւոր բժշկութիւն սուր եւ խրոնիկական տրիպէրի, փափուկ ու կոշտ շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն ձեւերով. բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Եկւոր օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն)։ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և բէլէպտներ 3 րուբլի վճարով։ Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ։ Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէս՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру
А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վեներական ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու բէլէպտներով, գ. 50 կոպ., 2) «Փորձանքների բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 30 կ., 3) «Ծիծաղի ծաղիկներ»՝ անէկդօտներ, գ. 20 կ., 4) «[illegible]», ծիծաղաշարժ վօդեվիլ, գ. 20 կ., 5) «Րաֆֆի», գ. 10 կ., և ճանապարհի ծախս 20 կոպէկ։
(Ե. Կ.) 311. 100—46

Եղբ. Աւսարգիսեանների
տնկարանը առաջարկում է պտղատու ծառեր սաղանական ամենալաւ տեսակի՝ չափաւոր գներով. միամեայ ծառերը 15—20 ր., երկամեայ ծառերը 25—30 ր. Հարիւր հատը։ Հասցէն՝ հասարակ, ապահովագրված և դրամական ծրարների համար. Ст. Скра (Зак. ж. д.), Г. П. Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի։
(Ե. Հ. Կ.) 721. 5—4

ԾԱԽՎՈՒՄ Է
ՄԱՆՐՈՒՔԻ ՄԻ
ԽԱՆՈՒԹ
Պայմանների մասին դիմել՝ Վօկզալնայա և Անդրէեվսկայա փողոցների անկիւն, № 81.
(Կ.) 734. 2—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետեւեալ հրատարակութիւնները.
1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
4) «ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկպ. Գ. Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Աղամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.
Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։
1. 0—7

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան
հսկողութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տել. № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։
(Ե. Հ. Կ.) 480. 0—37

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող
Հաշուապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ Թիֆլիս, Նիկօլայէվսկայա փող., № 36,
Նոյն տեղը ՊԱՆՍԻՕՆ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ
Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիօնով, դասերի պատրաստութեամբ և առանց
Խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։



Бичъ человѣчества побѣжденъ.
На леченіе хроническаго триппера нужно потерять только 50 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.
ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.
Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ" и коробку пилюль разрѣшен. медиц. совѣтомъ за № 1295 и ежедневно теряя на леченіе только двѣ минуты въ теченіе трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пяти лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ" излечило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.
Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излечитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указывающ., что болѣзнь не излечена, я немедленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.
Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ" основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.
За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ", и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излеченіе, на что у меня имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить что случаевъ неизлеченія препаратомъ „рапидъ" нѣтъ, и каждый больной, употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ" безусловно излечивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.
Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что мое увѣренность въ средствѣ „рапидъ" и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому, выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ", я вмѣстѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлеченія.
Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ леченія) и коробка пилюль 9 руб. Наложен. плат. и съ пересылкой 10 р. Нал. платеж. высылается только по полученіи 3 руб. задатка.
Заказы и требованіе адресовать исключительно въ Кавказское отдѣленіе Московской Лабораторіи, М. Деламуре, Тифлисъ Эриванск. пл. Пушкинская 3
отд. 6|М. верхный этажъ.
(Կ.) 609. 50—6

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խոկապէս ԴԻԶԷԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հորիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. Նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժենէրներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ.Կ.) 551. 150—139

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.